



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

21 հուլիսի 2009թ.

ք. Ստեփանակերտ

15-Լ

ՈՐՈՇՈՒՄ

ԼՂՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի ԹԻՎ 11-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2009թ. ապրիլի 21-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների գործավարության կանոնները հաստատելու մասին» թիվ 11-Լ որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա/ 1-ին կետի 9-րդ ենթակետի երկրորդ նախադասությունն ուժը կորցրած ճանաչել.

բ/ 6-րդ կետի 15-րդ ենթակետի «120» թիվը փոխարինել «200» թվով.

գ/ 9-րդ կետի 1-ին ենթակետի «խսկ դատարանի արխիվ հանձնելու անհնարինության դեպքում պահվում են գրասենյակում» նախադասությունը ուժը կորցրած ճանաչել:

դ/ 9-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ նախադասությամբ. «Վարույթն ավարտված քրեական, քաղաքացիական և վարչական գործերը ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի արխիվապահոցներում պահպանվում են 2 տարի, որից հետո հանձնվում են ԼՂՀ դատարանների արխիվ»:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում 2009թ. հուլիսի 31-ից:

**ԼՂՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ